

## Մ. ԷՋՄԻԱԾՆԻ Մ. ՏԱՃԱՐԻ ԶԵՆՈՎԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

(Սկիզբը տես «Էջմիածին» հունվար, 1944 թ.):

Այս ձեռագիր ավետարանը պահպանվում է Մ. Տաճարի Թանգարան-խորանում: Ըստ ավանդական սովորութեան ամեն տարի, Զատիկի ավագ ուրբաթ օրը դուրս է հանվում և դրվում է Իջման Սեղանին: Հավատացյալ Ժողովուրդը առանձին ջերմեռանդությամբ համբույր է տալիս այս ավետարանին և մոմեր է վառում:

Ձեռագիրը յուր կազմի արտաքին շեղութեամբ ունիկում է: Կազմի մեծությունն է  $7 \times 11$  սանտ. մեջը բարակ տախտակ կաշվով պատած, խեղ կաշվի վերայից, երկու կողերին փակցրած է արծաթյա թիթեղ մոտ 0,5 միլիմ. հաստությամբ: Առաջին կողի թիթեղի երեսին ամրացած է շատ նուրբ ոսկեջրած արծաթյա թելերով կերտված, զարդահյուսված քներով նախշված Չրջանակ, որի մեջտեղի նախը խաչի ձև ունի:

Շրջանակը զարդարված է 16 հատ հակինթ քարերով կարմիր ուռիին, շրջանակի բոլորքին 12 հատ և մեջտեղը խաչաձև նախշի եզրերին 4 հատ (շրջանակի շերտի մեկ քարը հանված է):

Կազմի երկրորդ կողի արծաթյա թիթեղի երեսին երկու կողմերում փակցրած են 12 առաքյալների բարձրադիր քանդակադրոշմ պատկերները, ամեն կողմում

6-ական: Պատկերների մեծությունն է  $8 \times 12$  միլիմ.: Մեջտեղում առանձին մեղալիոնի ձևով փակցրած է Քրիստոսի նույն ձևով պատրաստված, ոսկեջրած պատկերը  $2 \times 2 \times 5$  սանտ. մեծությամբ: Թիթեղը վերևում և ներքևում զարդարված է նույնպես հակինթ քարերով 3 հատ վերև և 3 հատ ներքևում (ներքևի մեկ հատը չկա): Կազմի մեջը արծաթյա թելերով չյուսված ցանցից է շինված<sup>1)</sup>:

Կազմը փակվում է երկու արծաթ ոսկեջրած գեղեցիկ փականք ճարձանդներով, որոնք նույնպես զարդարված են ակներով: Ամեն մեկ փականքի վրա կա երկու հանկինթ և մեկ փերուզա:

Թերթերի մեծությունն է  $7 \times 10,5$  սանտ., դրությունը միասյուն, սյունյակի մեծությունը  $4,5 \times 7,5$  սանտ. լուսանցքների լայնությունը 1,5 սանտ., սյունյակը պարունակում է 20—24 տող. տողերի քանակի և երկարության համաչափությունը խստիվ չի պահպանված, տողերը երբեմն անցնում են լուսանցքները, որոնք սյունյակի երկու կողմից երկշարք կարմիր գծով բաժանված են թերթերի երեսների ամբողջ երկարությամբ:

Գիրը—մանր բոլորագիր—ընդհանուր առմամբ պարզ է, տառերի համաչա-

1) Թիթեղի վրա, Քրիստոսի պատկերի ներքևում փորված է E 13 (զուցե արծաթագործ վարպետի անվան սկզբնատուներն են):

վուժյունը պահպանված է բավարար: Պատվազրեբի դործածությունը չափավոր է, բայց պատահում են նաև այնպիսի խիստ կրճատ բառեր պատվազրեբով, որոնց ընթերցումը միայն նախադասության մտքից կարելի է կուսահել: Օրինակ, Յ7 երեսում, իլի կրճատված բառը պիտի կարդալ Իսրայելի: Երբեմն գործածում են նաև բառերի նշանացույցեր: Օրինակ ∞ = աշխարհ, 9 = երկինք, 8 = երկիր:

Ավետարանների գլուխները միշտ սկզբվում են կարմիր գույնի ծաղկազրեբով, թունազրեբով և կամ մարդակերպ գլխազրեբով: Առաջին տողը ամբողջը կարմիր թանաքով է գրված: Հոդվածների առաջին գլխազրեբը Մատթեոսի ավետարանում գրված են խառն կարմիր կապույտ և կանաչավուն գույներով, իսկ հետևյալ երեք ավետարաններում՝ միայն կարմիր գույնով:

Նկարներ, զարդանկարներ չկան. միայն յուրաքանչյուր Ավետարանի առաջին երեսը ունի խորանկար և լուսանցքում դանգակատուն նկար: Չորս խորանանկարները տարբեր կոմպոզիցիաներ ունեն, նկարիչը օգտագործել է կարմիր, կապույտ և դեղին գույները: Նկարները բավական նուրբ, գեղեցիկ և խնամքով են կատարված:

Այս ձեռագիր ավետարանի մեջ ուշագրավ է այն, որ յուրաքանչյուր ավետարանի սկզբից տրված է ավետարանի ճշխարհությունը, ավետարանի բովանդակությունը և տեղեկություններ ավետարանիչների մասին: Իերում ենք այդ ճնախադրությունները:

1. Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին: Աւետարանն որ ըստ Մատթէոսի գրեալ է, զի ինքն Մատթէոս աշակերտ տեառն գրեաց զԱւետարանս զայս, եւ պատմէ մեզ ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ փրկչին ի զաւակէ Դաւթի, վասն որոյ եւ զաղքահամարն ժողովէ մինչեւ ի Քրիստոս. աղգս ի . և բ. բերէ ըստ կարգի: Եւ զմկրտութիւնն Յովհաննու եւ ի Լերինն, ի գիւէն փորձութիւնն եւ նշանս եւ արուեստս մեծամեծս ի փրկչէն եղեալս եւ զընարու-

թիւնն աշակերտաց, եւ վասն խորհրդոյ մատնութեան, եւ զկատարածն զի մատնեցաւ Պիղատոսի եւ խաչեցաւ մարմնով և մարմին եղաւ ի գերեզմանի եւ գինուորան բաժանեցին զհանդերձն նորա, նոյնն եւ չորրորդ աւուր յարութեանն եւ զպատուէր աշակերտացն աշակերտել զամենայն հեթանոսս եւ մկրտել զնոսա խոստացաւ լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի: Մատթէոս, որ եւ Դեւի, խեղճն յետ յարութեան Քրիստոսի նախքան գլուխն ի վիճակ իւր, գրեաց զԱւետարանն ի հրէականի երբայականաւ լեզուաւ վասն այնոցիկ, որք ի թլիսատութենէ հաւատացեալք էին:

2. Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին: Աւետարանս որ ըստ Մարկոսի գրեալ է նոյն Մարկոս աշակերտն Պետրոսի և ընթացակիցն Պաւղոսի եւ զնէ սկիզբն Աւետարանին ի Յովհաննու քարոզութեան եւ զմկրտութեանն Յովհաննու եւ առնու վկայարանութիւն յնսայեա մարգարէէ, նշանակէ եւ զփորձութիւնն ի լերին եւ ոչ ասէ զփորձանքն, պատմէ եւ վասն ընտրութեան աշակերտացն եւ զնշանս եւ զարուեստըս, զոր արար, եւ զխորհուրդ մատնութեան եւ զկատարածն, թէ որդէս մատնեցաւ Պիղատոսի եւ խաչեցաւ մարմնով, եւ գինուորքն բաժանեցին զհանդերձն նորա, եւ մարմինն եղաւ ի գերեզմանի եւ յարեալ երեք օրեայ. զիշանիլն հրեշտակին, եւ գերեզմանի կանանց, եւ պատմելն զնոյն աշակերտացն:

Մարկոս աշակերտ եւ թարգման Պետրոսի վիմին յետ հնգետասանից ամաց համբառնայոյ տեառն աղաչեցեալ ի Հոռոմ եղբարց հաւատացելոց ի Քրիստոս գրեաց զԱւետարանն լեզուաւ եգիպտականաւ համառոտապէս եւ հաւանութեամբ նոյնոյ սրբոյն Պետրոսի ասեալ զԱւետարանն իւր զնաց յԱղեքսանդրիայ եւ յետոյ յմգիստոս:

3. Նախադրութիւն Դուկասու Աւետարանին: Աւետարանս որ ըստ Դուկասու գրեալ է նոյն ինքն Դուկաս աշակերտն Պետրոսի որ ձեռնադրեցաւ ընթացակից Պո-

դոսի եւ վկայեցաւ ի նմանէ : Սա սկիզբն առնէ ի ծննդենէն Յովհաննու եւ զոր ըստ նմին պատմէ զմարմնաւան փրկչին . ազգաթիւ առնէ եւ ելանէ ի Յովսէփայ ի Դաւիթ եւ ի Դաւթէ մինչ ցԱդամ պատմէ սա եւ զմկրտութիւն Յովհաննու եւ զլինին տեսուն ի լերինն եւ զփորձութիւնն ի սատանայէ եւ զընտրելն զԹաւանասուն աշակերտս , ցուցանելն զնշանս եւ զարուեստս բազումս , զխորհուրդ մատնութեան , զկատարածն , զմատնին Գրիստոսի Պիղատոսէ Պոնտացւոյ , զխաչին մարմնով , զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա եւ ի խաչեցելոց երկուց աւազակացն մին ապաշխարեաց խոստովանութեամբ եւ զի մարմինն նորա եղաւ ի դերեղմանի եւ յարեալ յերրորդ աւուր եւ յետ այնորիկ համբարձաւ ի յերկինս երեւմամբ աշակերտաց :

Ղուկաս բժիշկ անտիոքացի , աշակերտ առաքելոյն Պողոսի յետ ժի ամաց համբառնայոյ տեսուն զբեաց զԱւետարանն իւր յԱնտիոք քաղաքի քաղղէականաւ լեզուաւ :

4. Նախադրութիւն Յովհաննու Աւետարանին : Աւետարանս որ ըստ Յովհաննու գրեալ է նոյն Յովհաննէսն , որ է եղբայր Յակոբայ Զբեթիայ , որ անկաւ ի վերայ լանջանացն տեսուն : Սա սկիզբն առնէ ի բանէն աստուածայնոյ եւ զըստ մարմնոյ ծնունդն յիշատակէ ասելով եւ բանն մարմին եղև , եւ յիշատակէ զմկրտութիւնն Յովհաննու եւ զընտրութիւն աշակերտացն : Այլև զնշանս եւ զարուեստս զորս արձար Յիսուս եւ զկատարածն եւ թէ որպէս մարմնեցաւ ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի եւ խաչեցաւ եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա եւ ի վերայ պատմուածանին նորա վիճակ արկին եւ մարմինն նորա եղաւ ի դերեղմանի եւ յարեալ յերրորդ աւուր եւ երեւեցաւ աշակերտացն :

«Յովհաննէս եղբայր Յակոբայ առաքելոյն կոչեցեալն Որդի Որոտման զկնի ԾԳ ամաց համբառնայոյ Տեսուն մերոյ Յիսուսի Գրիստոսի գրեաց զԱւետարանն իւր լեզուաւ յունականաւ յմիեռոս քաղաքի ըստ խնդրոյ Յփեսացն ասիացւոց :

«Նախադրութիւններէ» եւ աւետարաննե-

րի արանքներում թողնված են մէկական թերթ չգրված—ընդամենը 4 թերթ , եւ մեկական թերթ եւ կազմի ներքում սկզբից եւ վերջից իբրև պահպանակներ :

Ձեռագիրը ընդհանրապես շատ լավ է պահպանված . թերթերը լրիվ են , փչացած , կեղտոտված կամ պատռված թերթեր չկան : Միայն սկզբի երկու թերթերի պահպանակի եւ «Նախադրութեան» ներքևի կղերքը քիչ վնասված կն :

Ավետարանը շատ լավ է պահված . շնորհիվ այն հանգամանքի , որ առօրյա դործածութեան մեջ չի եղել ինչպես սկզբում հիշել ենք , տարին մեկ անգամ է միայն թանգարանից հանվում :

Ավետարանը ունի հիշատակարան : Վերջին 4 թերթերը 565 երեսից մինչև 572 երեսը գրել է Մարգարէ վարդապետի հիշատակարանն է , գրված խառն նոտրագրի մանր տառերով , հաճախած պատվագրերով , դժվարընթեռնելի :

Իբրում ենք հիշատակարանը ամբողջութեամբ .

«Յիշատակարան սրբոյ Աւետարանիս . փառք համազոյ միասնական անբաժանելի երրորդութեան եւ միոյ աստուածութեան անճառելի . անհաւանելի , անբաւելի , անիմանալի , անըննելի , անդննելի տէրութեան եւ ամենազօր զօրութեան յորում ձգեաց զերկին որպէս վրան եւ հաստատեաց առանց հիման . զլուսաւորսն բազմազան եւ զմրելիքս յերկինս ետ փառաբան : Եւ ամենայն արարծքս ի յոչնչէ ստեղծեաց . եւ զարդարեաց զերկինս եւ զերկիրս , որում միշտ գոհութիւն եւ փառաբանութիւն իւր անհուն ողորմութեան եւ անճառելի մարդասիրութեան զի . յիւրում հաղորդս արար իւր անբաւելի բարութեան , յուակ յետոյ այսր ամենայնի եկն միածին բանն աստուած մարդ եղել եւ զամենայն մարմնաւիք տնօրէնութիւնսն կատարեաց , որպէս խոստացաւ Նախահարցն ց'ի դալ յաշխարհ եւ ազատել եւ փրկել զզերեալքս եւ զզատապարտեալքս ի յսկզբնական մեղաց , եւ առնել ժառանգ եւ ժառանգակից իւր :

օրհնեալ երանական կենացն, որպէս և արար իսկ կրկին ևս քան զեւս. յորում միշտ և անլուծի զոհութիւն, որ ոչ անտես արար իւր ստեղծեալքս, այլ բունադատեալ ի սիրոյ մարդկային բնութեանն, մարդ եղև, զամենայն մարմնառիք տնօրինութիւնսն կատարեաց և ապա զկենսաբեր և զկենսատու շնորհալի մարմնառիք կտակս, որ կոչի սուրբ աւետարան. յետ վերանալոյ ի յերկինս եթող յիշատակ հուր մաքրութեան և առիթ սրբութեան, որպէս ինքն ասէ՝ հուր եկի արկանել յերկիր: Եւ այսու ճանապարհան ընթացան սուրբքն ի յերկինս, ոմանք արեան հեղման, ոմանք կուռութեամբ, ոմանք ճշմութեամբ և այլք ի պէս-պէս և զանազան առաքինութեամբ, զի և անտանելի միշտս զչարչարանս և զեկեղութիւնս աշխարհիս յամեն ստին վասն յուսոյ արքայութեան, ելին յաշխարհէ, բաժանեցան ի սիրելեաց, ի տանց և ի տեղեաց, ի յընչից և յապրանաց, քարկոծեցան, սղոցեցան և հետեցեցան բանին մարմնացելոյ: Ձի սա է վերկուծիւն ախտացեալ հոգւոց բժշկութեան և առողջութիւն հիւանդացեալ ցաւազնելոց, ուրախութիւն և մխիթարիչ արտօնցելոց: Ձի սա է դուռն երկնից և ճանապարհ արքայութեան. սա է քաղցելոց հաց և ծարաւելոց ջուր և ունի սա բանս խորինս և հիացականս և բոլոր մարմնատեք տնօրինութիւնսն ճատէ: Ձի սա է դրոնք համայն աստուածաշունչ զբեանց, օրհնք և արդարութիւնք համայն հաւատացելոց:

Արդ եղև գրեալ ի թուկանութեանս մերոյ ի ՌՄԻԳ (—1223+551=1774 թ.) յաշխարհիս Ուրարտեան և ի մայրս մեր լուսակառոյց երկնահանգէտ տիեզերահրաչակ և տիեզերալուր, արեգակնաստայլ և գերապաշտառ սրբոյ և մեծի սարսափելի Աթոռոյ Էջմիածնի և ի հայրապետութեան տեանն երից երանեալ տիեզերաջար և աշխարհալուր սրբազան Միսէոն կաթողիկոսին ամենայն հայոց:

Գիտութիւն լիցի սիրելեացդ, զի յայտ ժամանակի թաղաւոր ոչ զոյր յերկրիս յարևելեան, զի ի ձեռն աշխարհայաւեր Նադիրշահ կոչեցեալ, ելեալ ի խուժ

դուժ ազգէն բարբարոսաց, ի յերկրէն Սորասանայ ինքնագլուխ թաղաւորեալ և զթագաւորութիւնն պարսից բնաջինջ արարեալ, բայց ինքն վերջապէս ևս ոչ թագաւորեալ, այլ ի զօրացն իւրոց չարաչար կտրատեալ զտհաւատչեան անմեղ արյանց ի տեանն ընկալեալ, զի և յայտ ժամանակի ոչ զոյր իշխող և տէր, զի ամենայն ոք ինքնագլուխ եղեալ կեղեքէր ազգս հայոց, աւերէր երկիրս յարևելեան: Բայց իշխող երկրիս և խան նստեր ի քաղաքն յԵրևանդ և ինքն էր անարի և թուլամորթ ի պատերազմի, բայց սրբոյ դահոյս յոյժ արի: Ո՛հ, թէ զինչ զործեր, վասնզի էր ժանտաքարոյ, ագահ, անողորմ, խտտասիրտ և խորամանկ: Եւ թէ զինչ զործէր ընդ սրբոյ դահիս թէ որքան կեղեքէր, իբրև զտղբուկ արիւնաքարչ եղեալ ամենեւին ոչ յագեալ լինէր, ոչ զբամով և ոչ այլ այլով իւք. այլ քարչէր զինչս սրբոյ Աթոռոյս և ամենեւին ոչ յազնայր: Ընդ երեսս դառն ձևանար և ի ներքուստ գայլ արապացի: Ընդ խտտասիրտ զազանացեալ բնութեանն զի՞նչ ևս ասացից. մի՞թէ ամենահայեաց տէրն տեսցէ և ողորմեցի տառապեալ սուրբ Աթոռոյս և զսրտարեկ և զսրտակոտոր հայրապետիս: Եւ դարձեալ նորագոյն դարանակալ ահեղակերպ զազանն, որ նըստէր ի քաղաքն Շոշ, և նա ևս մեքենական հնարիւք քարչէր զինչս սրբոյ Գահոյս իբր թէ ընծայ եմ յուղարկում: Եւ ամենայն ոք բերանարաց եղեալ ոչ յազնային: Ոչ ոք տեղեաց դայր յօգնութիւն, Մի՞թէ արդարադատն դատ արասցէ, որպէս արար Նադիրն, վասն զի երևի այսպիսի անողորմ բռնակալաց արգահատումն և մերձ դառհաւատչեան, որպէս եղև Նադիր շահին և այլոց անողորմից: Ձի թէ զի՞նչ զործեաց ընդ Ղազար կաթողիկոսին: Ձի թէ մեղ լիցի մաքուր աղօթք՝ թշնամիք սորին շուտով կորնչին, բայց ոչ ունիմք զի անօրինութիւնք մեր բազմացան և թագաւորութիւն ազգիս բարձան, վասնք և անապատք մեր իսպառ բնաջինջ եղեալ աւեր դարձան և իշխանք մեր իսպառ վերջացան: Ձի ոչ ոք իցէ, որ ոչ ողբասցէ զմեզ Աստանոր լու-

մըն եղև մարդարէութեան մեծին ներսէի, յորում ողբայր անխիթար և անտանելի սգով ազգս Հայոց որպէս և ասէ ճողբամ զքեզ Հայոց աշխարհ» և դարձեալ ողբալ զժամն և զժամանակն, յորում լիովին կատարեցաւ: Զի ի մերումս ժամանակի օրն ևս ապականեալ, զի թէ որպիսի այլանդակ այլև այլ եղանակ շարժի և բերք երկրին ապականէ և առնէ սով մեծ, զի ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարկութիւն տեսան: Մի տէր որ տառապեցայցն, նոյն ինքն ըստ մեծի ողորմութեան իւրում ողորմեցցի:

«Արդ ես յետնեալ ամենաթշուառս և ստացող սրբոյ Աւետարանիս Մարգարէ և և ի թ վարդապետս, որ իմով ձեռամբս զրեցի, զի ի յինացն սկիզբն արարի դրեւն, եկանք յուլիսի ամսեան սկիզբն հիւանդութիւն մեծ անկաւի վերայ իմ, մինչ մի ակս ևս խաւարեցաւ: Այլ դեղ չի մնաց, որ չի արարի, այնուհետև յուսահատեալ վարանէր սիրտն իմ, կսկծայր աշխբ իմ և ողբայր բոլոր անձս յարստամ. և մնաց Աւետարանս կիսատ. դեռ կէս գլուխն չէի դրեալ: Արդ, կրկին յուսալով անհուն ողորմութեանն Աստուծոյ սկսայ միւս մի աւիտքն դրել, որ ամենևին նշարանքն հաղիւ երեւէր: Եհաս անհուն ողորմութիւնն Աստուծոյ, օր աւուր բացաւ եւ լուսաւորեաց սուրբ Աւետարանս չխաւարեալ ակն իմ. յորում զթութիւն բժշկողին ամենայնի, զի եղիցի յետ իմոյ անցմանն յիշատակ սրբոյ դահլիս:

Եւ այսքանս բաւեցին»:

Հիշատակարանից պարզվում է, որ ձեռագիր ավետարանը գրված է 1774 թվին էջմիածնի միաբան Մարգար Վարդապետի ձեռքով, իր անձնական զործածութեան

համար, քանի որ ավետարանի «ստացողը» — տերը ինքն է: Իմանում ենք նաև, որ ծանր և դառն ժամանակում է գրել նա իւր ավետարանը, երբ պարսից բռնակալ «Աշխարհաւեր» Նադիր շահի անկումից հետո խառնակ ժամանակից օգտվելով «ամենայն ոք ինքնագլուխ եղեալ կեղեքէր ազգս Հայոց»: Ժողովուրդը տանջվում էր անտեսապես և բարոյապես քայքայվում էր մեծ ու փոքր արևելյան բռնակալների շահատակումներից: Մյուս կողմից նրա օրերին բնութեան արհալիրքներն ևս դալիս են ավելի ծանրացնելու ժողովրդի թշվառ դրութեանը. «Զի ի մերումս ժամանակի օրն ևս ապականյալ այլանդակ այլևայլ եղանակ շարժի, և բերք երկրին ապականէ և առնուսով մեծ»:

Ատելի բռնակալների կեղեքումներից դերծ չի մնում նաև հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Երեւանի և Շուշու խաները կողոպտում, հարստահարում էին Մայր Աթոռի դուռքը և ստացվածքները ազգի: Ժողովրդի ծանր վիճակը բաժանում էր նաև Հայոց հարազատ եկեղեցին: Եւ այդ ծանր օրերին «ոչ ոք տեղեաց դայր յօգնութիւն»:

Վշտաբեկ, հայրենասեր և աղքատեր վարդապետը ազգի թշվառութեանը վերջ տալու այլ ճանապարհ չի կարողանում առաջադրել: Նրա միակ փրկութեան միջոցն էր՝ «Մի՞թէ արդարադատն դատ արասցէ, որպէս արար Նադիրին... և այլոց անողորմից»: Նա Աստուծոյ ողորմութեանն է հայցում ազգի և եկեղեցու բռնաբարիչների անարդարութեանը և բռնութեանը պատժելու:

ԵՋՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ